ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3

ք.Երևան «12» հունվարի 2021թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Պահապան 1» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Վանեցյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պահնորդական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է **530 700 000 (Հինգ հարյուր երեսուն միլիոն յոթ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Մեկ օրվա համար մատուցվող ծառայության գները ներկայացված է N 1.1 հավելվածում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.13 կետով կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1▯1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի

տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Պահապան 1» ՍՊԸ
ք.Երևան, Ավան, Քուչակ թաղ. 16/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150019206166199
ՀՎՀՀ 00925301

«Պահապան 1» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Վանեցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«12» հունվարի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Պահնորդական ծառայություններ
CPV- 98341140/502

1. Պահնորդական ծառայությունն անհրաժեշտ միջոցների ներգրավմամբ՝ մարդկային անձնակազմի կողմից իրականացվող գործունեություն է որը պարտավոր է՝

- շուրջօրյա պարեկության միջոցով կանխարգելել, կանխել և կասեցնել պահպանվող տարածքում իրավախախտումները,
- ապահովել պահպանվող տարածքում գտնվող անձանց պատշաճ վարքագիծը:

2. Պահնորդական ծառայությունը մատուցվում է պահնորդների միջոցով, ովքեր պետք է՝

- իրականացնեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահնորդական ծառայություն,
- իրականացնեն հասարակական կարգի պահպանում,
- կանխեն նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,
- անմիջապես արձագանքեն արտակարգ իրավիճակների դեպքում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն), և այդ մասին անհապաղ տեղեկացնեն անվտանգությամբ զբաղվող ստորաբաժանմանը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության անձնակազմի անվտանգության և պահպանության (այսուհետ ԱԱ և Պ) բաժնի պատասխանատուին,
- պահնորդական ծառայությունը ընդունելիս և հանձնելիս պարտադիր կերպով լրացնեն ընդունման և հանձնման մատյանները, արձանագրելով նաև ծառայության ընթացքում տեղի ունեցած միջադեպերը, իրավախախտումները, պատահարների դեպքերը,
- պահպանվող օբյեկտներում պահպանությունն ու ռեժիմը իրականացնեն՝ համաձայն վարչական շենքերի անցագրային ռեժիմի պահպանման վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 05.05.2017թ-ի 140-Ա հրամանի,
- աշխատակիցների և այցելուների մուտքի/ ելքի ժամանակ իրականացնեն անվտանգության անհրաժեշտ միջոցառումներ, ներառյալ՝ գրանցում, հաշվառում,
- այցելուներին տրամադրեն մեկանգամյա անցագրային թերթիկներ՝ անհրաժեշտության կամ համապատասխան հրահանգի դեպքում,
- կարգավորեն ավտոմեքենաների շարժը փակ տարածքում,
- աշխատանքային օրվա ավարտից հետո պարբերաբար՝ նվազագույնը 3-ից 4 անգամ, պարտադիր շրջայց կատարեն շենքի ներսում և/կամ պահպանվող տարածքում, կախված պահպանվող օբյեկտի առանձնահատկություններից,
- կատարեն պահպանվող տարածքի անվտանգության ապահովման հետ կապված՝ ԱԱ և Պ բաժնի իրավասու անձանց հանձնարարությունները,
- արտակարգ իրավիճակի դեպքում օժանդակեն աշխատակիցներին՝ վտանգը չեզոքացնելու կամ դրա հետևանքները վերացնելու կամ նվազեցնելու հարցում,
- իրականացնեն պահպանվող տարածքի դռների բանալիների ապահով հսկողություն՝ դրանք հանձնելով միայն լիազորված անձանց:

3. Պահպանության կառուցվածքը՝

Պահնորդական ծառայությունն իրականացվելու է նշված հասցեներում շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, քսանչորսժամյա և ութժամյա գրաֆիկով պահնորդների փոփոխական քանակով, համաձայն կից ներկայացվող Ցանկի,

Ծառայության ընթացքում աշխատակցի հանգստի գրաֆիկը (ժամերը) ֆիքսվում և համաձայնեցվում են Պատվիրատուի հետ:

Պահնորդները պետք է ստորագրեն գաղտնիության տեղեկատվության անվտանգության պարտավորագիր, համաձայն կից ներկայացվող Ձև 2-ի,

Վերոնշյալ բոլոր պայմանները պարտադիր են և պետք է իրականացվեն պահնորդական ծառայությունը մատուցողի կողմից:

Պահնորդական ծառայություն մատուցողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կկրի այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով կհասցվի Պատվիրատուին, ինչպես նաև իրեն վստահված նյութական արժեքների վնասի համար:

Պահնորդական ծառայություններ մատուցելիս պահնորդները պետք է կրեն եղանակային պայմաններին համապատասխան ամառային և ձմեռային միասնական համազգեստ, որի տեսքը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ ու ԱԱ և Պ բաժնի համապատասխան հրամանից հետո անցում կատարի ձմեռային համազգեստից ամառայինի և հակառակը:

Պահնորդների պահակակետերը պետք է համալրված լինեն հատուկ տեխնիկական միջոցներով՝ ձեռնաշղթաներով, մահակներով և լապտերով, բացառությամբ կից ներկայացվող Ցանկի 4-րդ կետի, որտեղ մատուցվելու է նաև հրազենով զինված ծառայություն:

Կատարողը պարտավոր է՝

պահնորդին այլ պահնորդով մշտապես կամ ժամանակավորապես փոխարինելիս ոչ ուշ քան 24 ժամ առաջ համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

Պայմանագրի կատարման ընթացքում պահնորդի կողմից պահնորդական ծառայությունների ոչ պատշաճ կատարման կամ չկատարման դեպքում՝ Կատարողը պարտավոր է անհապաղ շտկել առկա խնդիրը, հակառակ դեպքում՝ Պատվիրատուի պահանջով 1 աշխատանքային օրվա ընթացքում փոխարինել ծառայություն իրականացնող պահնորդին այլ պահնորդով:

Կատարողը պարտավոր է իրականացնել հսկողություն և զեկուցել ԱԱ և Պ բաժնի պետին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի պահանջով շրջիկ խմբի միջոցով օրական առնվազն երեք անգամ կազմակերպել ծառայության մատուցման ստուգում:

Ծառայություն մատուցման գնման, վճարման պայմանները
Ծառայության մատուցումը իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա և համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված առավելագույնը 365 օրացույցային օրվա ընթացքում (Մասնակիցը գնի առաջարկ ներկայացնում է 365 օրացույցային օրվա համար), ընդ որում ոչ շուտ քան համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացույցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի շուտ: Վճարումը իրականացվում է փաստացի մատուցված ծառայության համար:

***Գնման գործընթացը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:**

Հ/հ	Հասցե, Անվանում	Պահպ. շինության մակերեսը	Պահպ. տարածքի մակերեսը	Հարկերի քանակը	Անցակետերի քանակը	Միավոր	
						24ժ (շաբաթական 7 օր)	8ժ (շաբաթական 5 օր)
1	ՆԱՎ, Անդրանիկի 37/1	731.6	-	2	1	4.5	-
2	ՀՎՍՎ թիվ 3-րդ բաժին,Քննչական վարչություն,ՀՕՀՎ Դեղատան 3	2628.7	-	6	1	4.5	1.125
3	SS վարչություն,Ուսումնական կենտրոն ՊՈԱԿ,ՀԴՄ ՊՈԱԿ, Ահարոնյան 12/3	1812.4	-	3	1	4.5	1.125
4	SS վարչություն,Ուսումնական կենտրոն ՊՈԱԿ,ՀԴՄ ՊՈԱԿ, Ահարոնյան 12/3 - զինված	1812.4	-	3	1	4.5	-
5	ՀՎՍՎ 1-ին և 20-րդ բաժիններ,Կազմակերպման և հսկողության վարչություն, ՀՎՍՎ, ՓՀՎ,Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն, Կոմիտաս 35	4440.1	149.7	7	1	4.5	1.125
6	ԳԿՎ, Ավտոտնտեսություն, ք.Երևան,Սևանի 104	525.3	1797.7	1	1	4.5	-
7	Արարատյան ՄՏ-Վ, ՄԴՊՎ, ՀՀՎ, Ցանկապատված պահպանվող ավտոկայանատեղի, Ծովակալ Իսակովի 10	5631.5	7810.22	10	2	13.5	1.125
8	ՀՕՀՎ, Ծովակալ Իսակովի 10, 3-րդ հարկ	355	-	1	1	4.5	-
9	Մաքսային հսկողության վարչություն,մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչություն, Ծովակալ Իսակովի 10/16	1815.29	-	5	1	9.0	-
10	ՀՎՍՎ 5-րդ բաժին,ՓՀՎ 1-ին և 5-րդ բաժիններ, Մոլդովական 41/3	2343.4	4609.8	2	1	4.5	-
11	ՀՎՍՎ թիվ 6-րդ բաժին ՓՀՎ թիվ 2-րդ և 6-րդ բաժիններ, Մանթաշյան 55	1242.7	1001.6	2	1	4.5	-
12	ՀՎՍՎ թիվ 4-րդ բաժին, ՓՀՎ թիվ 3-րդ և 4-րդ բաժիններ, Ներքին աուդիտի վարչություն, ՀՕՀՎ, Շինարարների 3	1661.6	977.13	3	1	4.5	-
13	ՀՎՍՎ թիվ 2-րդ բաժին, Իրավաբանական վարչություն, Սասունցի Դավթի 87 և 87ա	1250.3	-	4	1	4.5	-

14	ՀՎՍՎ թիվ 21-րդ բաժին, պահեստային տարածք, ք. Երևան, Արարատյան 90	5102.4	1881.6	6	1	4.5	-
15	ՄԴՊՎ Շնագիտական բաժին/կենտրոն, ք. Երևան, Հյուսիսային փողոց 6	1413.6	5429.1	2	1	4.5	-
16	ՀՎՍՎ թիվ 15-րդ բաժին, ՓՀՎ թիվ 15-րդ բաժին, ՀՕՀՎ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1	952.3	-	2	1	4.5	-
17	ՀՎՍՎ թիվ 19-րդ բաժին, ՓՀՎ թիվ 15-րդ բաժին, ք. Հրազդան, Սպանդարյան-24/1-24/2	1123.9	1920.36	3	1	4.5	-
18	ՀՎՍՎ թիվ 17-րդ բաժին, ՓՀՎ թիվ 10-րդ բաժին, ՀՕՀՎ, ք. Սևան , Սայաթ-Նովա 1/1	497	367.5	2	1	4.5	-
19	ՀՎՍՎ թիվ 10-րդ բաժին, ՓՀՎ թիվ 10-րդ բաժին, Իրավաբանական վարչություն, ք. Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի 4	488	97	2	1	4.5	-
20	ՀՎՍՎ թիվ 9-րդ բաժին, ՓՀՎ թիվ 9-րդ բաժին, ք.Արտաշատ, Օգոստոսի 23, փող. 83	969.1	1835.45	2	1	4.5	-
21	ՀՎՍՎ թիվ 12-րդ բաժին, ՓՀՎ թիվ 12-րդ բաժին, ՀՕՀՎ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի 8/3	614.2	36.45	4	1	4.5	-
22	ՀՎՍՎ թիվ 14-րդ բաժին, ՓՀՎ թիվ 14-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Կապան, Ռ. Մինասյան 20ա	986.6	880.13	3	1	4.5	-
23	Հարավային մաքսատուն վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժին, գ. Կարճևան, Մայրուղի-4	2767.9	59896.05	2	6	31.5	-
24	Հարավային ՄՏ-Վ, գ. Շաքե, Երևան-Սիսիան մայր. 7-րդ կմ	1171.28	12428.72	1	2	9.0	1.125
25	ՀՎՍՎ թիվ 7-րդ բաժին, ՓՀՎ թիվ 7-րդ բաժին, ք. Աշտարակ, Պռոշյան 29	1464.16	1143.96	4	1	4.5	-

26	ՀՎՍՎ թիվ 8-րդ բաժին, ՓՀՎ թիվ 8-րդ բաժին, ք. Էջմիածին, Մաշտոցի 81	634.1	-	3	1	4.5	1.125
27	ՀՎՍՎ թիվ 13-րդ բաժին, ՓՀՎ թիվ 13-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Իջևան, Անկախության 12	1269	418.5	2	1	4.5	-
28	ՀՎՍՎ թիվ 16-րդ բաժին, ՓՀՎ թիվ 16-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Վանաձոր, Վարդանանց 11	1420.2	489.9	2	1	4.5	1.125
29	Արևելյան մաքսատուն-վարչություն, ք.Վանաձոր, Մոսկովյան 44	985	2375.5	2	2	13.5	-
30	ՀՎՍՎ թիվ 11-րդ բաժին, ՓՀՎ թիվ 11-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Գյումրի, Հովսեփյան 1	1021.1	670.31	2	1	4.5	-
31	Հյուսիսային մաքսատուն-վարչության Ավտոմաքսատուն, ք.Գյումրի, Թբիլիսյան 2/14	4740	47960	1	6	31.5	1.125

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Պահապան 1» ՍՊԸ
ք.Երևան, Ավան, Քուչակ թաղ. 16/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150019206166199
ՀՎՀՀ 00925301

«Պահապան 1» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Վանեցյան
(ստորագրություն)
Կ.Տ

«12» հունվարի 2021թ.

Հավելված N 1.1
կնքված
ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆԱՑՈՒՑԱԿ ԸՍՏ ՏՈՂԵՐԻ

Հ/հ	Հասցե, Անվանում	Մեկ օրվա մատուցվող ծառայության գինը ՀՀ դրամ
1	ՆԱՎ, Անդրանիկի 37/1	32 152,72
2	ՀՎՍՎ թիվ 3-րդ բաժին,Քննչական վարչություն,ՀՕՀՎ Դեղատան 3	40 557,7
3	SS վարչություն,Ուսումնական կենտրոն ՊՈԱԿ,ՀԴՄ ՊՈԱԿ, Ահարոնյան 12/3	40 557,7
4	SS վարչություն,Ուսումնական կենտրոն ՊՈԱԿ,ՀԴՄ ՊՈԱԿ, Ահարոնյան 12/3 - զինված	32 152,72
5	ՀՎՍՎ 1-ին և 20-րդ բաժիններ,Կազմակերպման և հսկողության վարչություն, ՀՎՍՎ, ՓՀՎ,Խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն, Կոմիտաս 35	40 557,7
6	ԳԿՎ, Ավտոտնտեսություն, ք.Երևան,Սևանի 104	32 152,72
7	Արարատյան ՄՏ-Վ, ՄԴՊՎ, ՀՀՎ, Ցանկապատված պահպանվող ավտոկայանատեղի, Ծովակալ Իսակովի 10	105 363, 204
8	ՀՕՀՎ, Ծովակալ Իսակովի 10, 3-րդ հարկ	32 152,72
9	Մաքսային հսկողության վարչություն,մաքսային վիճակագրության և եկամուտների հաշվառման վարչություն, Ծովակալ Իսակովի 10/16	64 805,1
10	ՀՎՍՎ 5-րդ բաժին,ՓՀՎ 1-ին և 5-րդ բաժիններ, Մոլդովական 41/3	32 152,72
11	ՀՎՍՎ թիվ 6-րդ բաժին ՓՀՎ թիվ 2-րդ և 6-րդ բաժիններ, Մանթաշյան 55	32 152,72
12	ՀՎՍՎ թիվ 4-րդ բաժին, ՓՀՎ թիվ 3-րդ և 4-րդ բաժիններ, Ներքին աուդիտի վարչություն, ՀՕՀՎ, Շինարարների 3	32 152,72
13	ՀՎՍՎ թիվ 2-րդ բաժին, Իրավաբանական վարչություն, Սասունցի Դավթի 87 և 87ա	32 152,72
14	ՀՎՍՎ թիվ 21-րդ բաժին, պահեստային տարածք, ք.Երևան, Արարատյան 90	32 152,72
15	ՄԴՊՎ Շնագիտական բաժին/կենտրոն, ք. Երևան, Հյուսիսային փողոց 6	32 152,72
16	ՀՎՍՎ թիվ 15-րդ բաժին, ՓՀՎ թիվ 15-րդ բաժին, ՀՕՀՎ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1	32 152,72
17	ՀՎՍՎ թիվ 19-րդ բաժին, ՓՀՎ թիվ 15-րդ բաժին, ք. Հրազդան, Սպանդարյան-24/1-24/2	32 152,72
18	ՀՎՍՎ թիվ 17-րդ բաժին, ՓՀՎ թիվ 10-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Սևան , Սայաթ-Նովա 1/1	32 152,72
19	ՀՎՍՎ թիվ 10-րդ բաժին, ՓՀՎ թիվ 10-րդ բաժին, Իրավաբանական վարչություն, ք.Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսսիյսկի 4	32 152,72

20	ՀՎՍՎ թիվ 9-րդ բաժին, ՓՀՎ թիվ 9-րդ բաժին, ք.Արտաշատ, Օգոստոսի 23, փող. 83	32 152,72
21	ՀՎՍՎ թիվ 12-րդ բաժին, ՓՀՎ թիվ 12-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Եղեգնաձոր, Նարեկացի 8/3	32 152,72
22	ՀՎՍՎ թիվ 14-րդ բաժին, ՓՀՎ թիվ 14-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Կապան, Ռ. Մինասյան 20ա	32 152,72
23	Հարավային մաքսատուն վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժին, գ.Կարճևան, Մայրուղի-4	32 152,72
24	Հարավային ՄՏ-Վ, գ.Շաքե, Երևան-Սիսիան մայր. 7-րդ կմ	73 710,52
25	ՀՎՍՎ թիվ 7-րդ բաժին, ՓՀՎ թիվ 7-րդ բաժին, ք.Աշտարակ, Պռոշյան 29	32 152,72
26	ՀՎՍՎ թիվ 8-րդ բաժին, ՓՀՎ թիվ 8-րդ բաժին, ք. Էջմիածին, Մաշտոցի 81	40 557,7
27	ՀՎՍՎ թիվ 13-րդ բաժին, ՓՀՎ թիվ 13-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Իջևան, Անկախության 12	32 152,72
28	ՀՎՍՎ թիվ 16-րդ բաժին, ՓՀՎ թիվ 16-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Վանաձոր, Վարդանանց 11	40 557,7
29	Արևելյան մաքսատուն-վարչություն, ք.Վանաձոր, Մոսկովյան 44	97625,3
30	ՀՎՍՎ թիվ 11-րդ բաժին, ՓՀՎ թիվ 11-րդ բաժին, ՀՕՀՎ, ք.Գյումրի, Հովսեփյան 1	32 152,72
31	Հյուսիսային մաքսատուն-վարչության Ավտոմաքսատուն, ք.Գյումրի, Թբիլիսյան 2/14	234472,86

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Պահապան 1» ՍՊԸ
ք.Երևան, Ավան, Քուչակ թաղ. 16/2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150019206166199
ՀՎՀՀ 00925301

«Պահապան 1» ՍՊԸ-ի տնօրեն՝

Լ.Վանեցյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

Ես՝ _____ հանդիսանալով _____ աշխատակից, պարտավորվում եմ.

1. Աշխատանքային գործունեության ընթացքում, որևէ կերպ ինձ հայտնի դարձած Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) դասակարգված տեղեկատվությունը՝ հարկային, մաքսային, կոնֆիդենցիալ, ծառայողական և առևտրային գաղտնիք հանդիսացող, ինչպես նաև ՀՀ ՊԵԿ ներքին օգտագործման, ներառյալ հանրության համար նախատեսված տեղեկատվությունը մինչև դրա պաշտոնական հրապարակումը **(այսուհետ՝ դասակարգված տեղեկատվություն)**, անկախ դրա կրիչից (բանավոր, գրավոր, թվային, էլեկտրոնային, տեսանելի, թղթային) օգտագործել միայն ՀՀ ՊԵԿ կողմից ինձ տրված իրավունքների իրացման և պարտականությունների կատարման համար:

2. Չգաղտնազերծել իմ տիրապետության տակ գտնվող կամ ինձ հասանելի դարձած դասակարգված տեղեկատվությունը, չփոխանցել այլ անձանց, ներառյալ ՀՀ ՊԵԿ աշխատակից հանդիսացող, սակայն տվյալ տեղեկության ստացման իրավունք չունեցող, բացառությամբ ՀՀ ՊԵԿ լիազորված ղեկավարի կողմից տեղեկատվության հրապարակման գրավոր թույլտվության առկայության և ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Չպատճենահանել կամ այլ կերպ չվերարտադրել դասակարգված տեղեկատվությունը, կամ չհրապարակել, չփոխանցել կամ այլ կերպ չհաղորդակցել, ամբողջությամբ կամ մասամբ, ցանկացած դասակարգված տեղեկատվություն որևէ մեկի:

4. Սույն պարտավորագրի առաջին կետում նշված տեղեկությանը վերաբերվել պատշաճ կերպով և տեղեկատվական անվտանգության պահանջներին համաձայն:

5. Պահպանել սույն պարտավորագրի պայմանները անգամ ՀՀ ՊԵԿ հետ իմ գործատուի պայմանագրի դադարումից հետո, տվյալ տեղեկատվության պահպանման համար ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված ժամկետների ընթացքում:

Ես գիտակցում եմ, որ սույն պարտավորագրով ամրագրված իմ պարտավորությունների խախտման համար ես պատասխանատվության կենթարկվեմ ՀՀ գործող օրենսդրությամբ և իմ գործատուի ներքին կարգապահական կանոններով նախատեսված պատժամիջոցներով:

_____ _____

Պարտավորվող Ամիս Ամսաթիվ

Հավելված 2
«12» հունվարի 2021թ. կնքված
ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«12» հունվար 2021թ. կնքված
ՊԵԿ-ԲՄԾՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն